

040.0507.070505

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"7" մայիսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2005 թվականի N 507-Ն

ՀԱԿԱՍԱՌԻՉՆԵՐԻ ԵՎ ՀԻՂՐԱՎԼԻԿ ԱՐԳԵԼԱԿԻ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Ստանդարտացման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել հակասառիչների եւ հիդրավլիկ արգելակի հեղուկների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-ԻՆ

Հավելված
ՀՀ կառավարության
2005 թվականի ապրիլի 21-ի
N 507-Ն որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱԿԱՍԱՌԻՉՆԵՐԻ ԵՎ ՀԻՂՐԱՎԼԻԿ ԱՐԳԵԼԱԿԻ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն հակասառիչների եւ հիդրավլիկ արգելակի հեղուկների տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) տարածվում է ճանապարհային տրանսպորտի ներքին այրման շարժիչների սառեցման, հիդրավլիկ փոխանցիչների ու էներգիայի կուտակիչով հիդրավլիկ արգելակների համակարգերում որպես բանոդ հեղուկ նախատեսված՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի

ծածկագրերին համապատասխան՝ հետեւյալ հակասառիչների եւ հիդրավլիկ արգելակի հեղուկների վրա՝

հակասառիչներ (անտիֆրիզ), բացառությամբ՝

հակասառցապատման հեղուկների

3820 00 000,

նավթ կամ նավթամթերք չպարունակող կամ 70 տոկոսից պակաս

զանգվածային մասով բիտումային տեսակի հանքանյութերից ստացված

նավթ կամ նավթամթերք պարունակող հիդրավլիկ արգելակի հեղուկներ 3819 00 000:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են 1-ին կետում նախատեսված

հակասառիչների եւ հիդրավլիկ արգելակի հեղուկների (այսուհետ՝ արգելակի հեղուկներ) անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց մակնշմանը, փաթեթավորմանը, փոխադրմանը, պահմանը եւ շրջակա միջավայրի պահպանությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում օդային տրանսպորտում եւ ռազմական տեխնիկայում օգտագործվող հակասառիչների եւ արգելակի հեղուկների վրա:

4. Հակասառիչները եւ արգելակի հեղուկները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են հետևյալ հասկացությունները՝

հակասառիչ՝ ցածրասառ հեղուկ, որը կիրառվում է ներքին այրման շարժիչների սառեցման համար, ինչպես նաեւ որպես աշխատանքային հեղուկ՝ ցածր եւ չափավոր ջերմաստիճաններում աշխատող ջերմափոխանակիչ կայանքների համար,

արգելակի հեղուկ՝ տեխնիկական հեղուկ արգելակների հիդրոհամակարգերի համար, էներգիայի կուտակիչով հիդրավլիկ արգելակներ՝ արգելակման համակարգ, որում էներգիան մատակարարվում է մեկ կամ ավելի կուտակչում կուտակված, ճնշման տակ գտնվող մեկ կամ ավելի ճնշող պոմպից (պոմպերից) սնվող հիդրավլիկ հեղուկի միջոցով, որից (որոնցից) յուրաքանչյուրն ապահովված է արտադրողի կողմից սահմանված ճնշման առավելագույն արժեքը սահմանափակող սարքով:

III. ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Հայաստանի Հանրապետության տարածքում հակասառիչների եւ արգելակի հեղուկների իրացումն առանց համապատասխանության հավաստման արգելվում է:

7. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա եւ շրջանառության մեջ գտնվող հակասառիչներն ու արգելակի հեղուկները պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ կամ համապատասխանության սերտիֆիկատով կամ գրանցված համապատասխանության հայտարարագրով:

IV. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Հակասառիչներն արտադրվում են հակասառիչ խտանյութի եւ բանոդ հակասառիչների տեսակներով:

Հակասառիչ խտանյութն իրենից ներկայացնում է 5 տոկոսից ոչ ավելի ջրի զանգվածային մասով հակասառիչ, որը չի օգտագործվում որպես բանոդ հակասառիչ: Այն նախատեսված է ջրով նոսրացնելու միջոցով բանոդ հակասառիչ ստանալու համար:

Հակասառիչ խտանյութի նոսրացման կարգը սահմանվում է կոնկրետ արտադրանքի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթով:

Բանոդ հակասառիչները, կախված բյուրեղացման սկզբի ջերմաստիճանից, բաժանվում են երկու տեսակի՝ բանոդ հակասառիչ - 65 եւ բանոդ հակասառիչ - 40:

Հակասառիչների անվտանգության ցուցանիշները պետք է համապատասխանեն 1-ին աղյուսակով սահմանված նորմերին:

Ցուցանիշի անվանումը	Նորմը		
	հակասառիչ խտանյութ/բանող	բանող	հակասառիչ-65/հակասառիչ-40
Խտությունը, գ/սմ ³	1,100-ից մինչև 1,150	1,085-ից մինչև 1,100	1,065-ից մինչև 1,085
Բյուրեղացման սկզբի ջերմաստիճանը, օC, ոչ բարձր	մինուս 35	մինուս 65	մինուս 40
(թորած ջրով 1:1 ծավալային հարաբերությամբ նոսրացնելիս)			
Չափամասային տվյալները. թորման սկզբի ջերմաստիճանը, օC, ոչ ցածր	100	100	100
մինչև 150 օC թորված հեղուկի զանգվածային մասը, % , ոչ ավելի	5	40	50
Մետաղների վրա քայքայիչ (կոռոզիական) ազդեցությունը, գ/սմ ² . օր, ոչ ավելի			
պղինձ, արույր, պողպատ, թուջ, ալյումին	0,1	0,1	0,1
(աղային լուծույթով 1:1 ծավալային հարաբերությամբ նոսրացնելիս)			
զոդանյութ	0,2	0,2	0,2
(աղային լուծույթով 1:1 ծավալային հարաբերությամբ նոսրացնելիս)			
Ռեստինի ուռչումը, %, ոչ ավելի	5	5	5
(թորած ջրով 1:1 ծավալային հարաբերությամբ նոսրացնելիս)			
Ջրածնային ցուցիչը (pH)	7,5-ից մինչև 11,0	7,5-ից մինչև 11,0	7,5-ից մինչև 11,0
(թորած ջրով 1:1 ծավալային հարաբերությամբ նոսրացնելիս)			

9. Արգելակի հեղուկներն ըստ բաղադրության բաժանվում են 70 տոկոսից պակաս զանգվածային մասով բիտումային տեսակի հանքանյութից ստացված նավթ կամ

նավթամթերք պարունակող (այսուհետ՝ նավթի հիմքով) եւ նավթ կամ նավթամթերք չպարունակող (այսուհետ՝ ոչ նավթի հիմքով) տեսակների:

Արգելակի հեղուկների անվտանգության ցուցանիշները պետք է համապատասխանեն 2-րդ աղյուսակով սահմանված նորմերին:

Աղյուսակ 2

Ցուցանիշի անվանումը		Նորմը	
		նավթի հիմքով	ոչ նավթի հիմքով
		գերչակի յուղի եւ այլ բուտիլ սպիրտի բաղադրիչների խառնուրդի հիմքով	
1	2	3	4
Արտաքին տեսքը	կանաչ գույնի պարզ, առանց կախույթի, նստվածքի եւ կարմրավուն կամ մեխանիկական նստվածքի եւ նարնջագույն առանց մեխանիկական նստվածքի եւ լիստանուկների	համասեռ, թափանցիկ	թափանցիկ, առանց նստվածքի եւ մեխանիկական նստվածքի եւ լիստանուկների
Եռման ջերմաստիճանը, °C, ոչ ցածր	10%-ոց խտանյութինը՝ 250	114	205
		140 (որոշված ՀՍՏ ԻՄՈ 4925 ստանդարտի 5.2.1 մեթոդով)	
Կինեմատիկական մածուցիկությունը, մմ ² /վ, (0+/-0,5) °C			
Ջերմաստիճանում, ոչ ավելի մինուս 40 °C	-- 100	--	
Ջերմաստիճանում, ոչ ավելի (50+/-0,5) °C	2000 --	1500	
Ջերմաստիճանում ոչ ավելի (70+/-0,5) °C	-- 7,0	--	
Ջերմաստիճանում, ոչ ավելի 100 °C	-- 4,0	--	
Ջերմաստիճանում, ոչ ավելի 100 °C	6,0 --	1,5	

Ջրածնային ցուցիչը (pH)	--	6,0-ից ոչ պակաս	7,0-ից մինչև 11,5
Փոխազդեցությունը մետաղների հետ՝ ա) թիթեղների արտաքին տեսքը	Մետաղյա մասերը չպետք է կրեն	Թիթեղի վրա անգեն աչքով տեսանելի	Մետաղյա մասերի վրա (ինչպես հեղուկի անգեն աչքով փչուկի կամ հետ շփվող, այնպես տեսանելի անհարթության էլ չշփվող) անգեն քայքայում բացակայություն: աչքով չպետք է (կոռոզիա): Թույլատրվում է նկատվեն Թույլատրվում է գույնի քերծվածքներ կամ թեթևակի ժանգ փոփոխություն կոշտացումներ: կամ Թույլատրվում է գունաթափություն: թեթևակի ժանգ կամ Չպետք է առաջանա գունաթափություն: 1 մմ տրամագիծը Չպետք է առաջանա գերազանցող սույն կետի "բ" քերծվածք ենթակետով սահմանված նորմերը գերազանցող քայքայում (կոռոզիա): Հեղուկ ջուր խառնուրդում (50+/-2) օC-ում չպետք է նկատվի դոմդոմանման գոյացություն: Ոչ ապակյա տարայի պատերին, ոչ էլ մետաղյա մասերի մակերեսին չպետք է գոյանա եւ մնա բյուրեղային մնացորդ: Հեղուկի նստվածքը չպետք է լինի 0,01 տոկոսից ավելի:
բ) թիթեղների միավոր մակերեսին ընկնող կանգվածի թույլատրելի փոփոխությունը, մգ/սմ ² .			
սպիտակ թիթեղ	--	0,2-ից ոչ ավելի	0,2-ից ոչ ավելի (անազապատ երկաթ)
պողպատ	+/-0,05	0,2-ից ոչ ավելի	0,2-ից ոչ ավելի
ալյումին	+/-0,05	0,1-ից ոչ ավելի	0,1-ից ոչ ավելի
թուջ	+/-0,05	0,2-ից ոչ ավելի	0,2-ից ոչ ավելի

արույր	+/-0,05	0,4-ից ոչ ավելի	0,4-ից ոչ ավելի	
պղինձ	+/-0,05	0,4-ից ոչ ավելի	0,4-ից ոչ ավելի	
ցինկ	+/-0,05	--	0,4-ից ոչ ավելի	
բրոնզ	+/-0,05	--	--	
մետաղները հանելուց				
հետո.				
հեղուկի ջրածնային				
ցուցիչը (pH)	--	6,0	--	
արտաքին տեսքը	--	Առանց դոնդողանման		--
		ե բյուրեղային		
		նստվածքի:		
		Թույլատրվում է		
		հեղուկի գույնի		
		մզացում:		
<hr/>				
Ռետինի վրա				
ազդեցությունը՝				
ա) ռետինե խցողակի				
հիմքի տրամագծի				
ավելացումը 70 օC եւ				
120 օC				
ջերմաստիճաններում,				
մմ՝				
տիրոլ բութադիենային	--	--	0,15-ից մինչեւ	
ռետին		1,40		
բնական ռետին	--	--	0,15-ից մինչեւ	
		1,40		
բ) կարծրության				
փոփոխությունը,				
IRHD՝				
պոլիբլորոպրենային	0-ից մինչեւ	--	--	
ռետին	մինուս 10			
բութադիեն-				
աքրիլոնիտրիլային	3-ից մինչեւ	--	--	
ռետին	մինուս 5			
ստիրոլ				
բութադիենային				
ռետին, ոչ ավելի.				
70 օC				
ջերմաստիճանում	--	--	10	
120 օC				
ջերմաստիճանում	--	--	15	
բնական ռետին, ոչ				
ավելի	--	--	10	
գ) ծավալի				
փոփոխությունը, %.				
պոլիբլորոպրենային				
ռետին	0-ից մինչեւ 10	--	--	
բութադիեն-				
աքրիլոնիտրիլային				

նետին	0-ից մինչև 10	--	--	
ստիբոլ				
բութադիենային նետին				
70 օC եւ 120 օC				
ջերմաստիճաններում	--	--	1-ից մինչև 16	
բնական նետին	--	--	1-ից մինչև 16	
դ) նետինի				
ընդարձակումը				
(70+/-2) օC				
ջերմաստիճանում				
(72+/-2) Ժ				
ընթացքում.	--	2-ից մինչև 8	--	
նմուշի ծավալի	--	չի թույլատրվում	--	
փոփոխությունը, %		կաշունություն,		
արտաքին տեսքը		փուչիկներ կամ		
		անհարթություններ		
<hr/>				
Ջրի զանգվածային				
մասը, %, ոչ ավելի	0,005	--	0,005	

(2-րդ աղյուսակը փոփ. 25.01.07 թիվ 83-Ն որոշում)

Հակասառիչների եւ արգելակի հեղուկների մականշմանը ներկայացվող պահանջները

10. Հակասառիչների եւ արգելակի հեղուկների յուրաքանչյուր սպառողական տարայի վրա պետք է լինի հետևյալ բովանդակության մականշվածք՝

ա) արտադրող, մատակարարող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը եւ (կամ) ապրանքային նշանը (առկայության դեպքում),

բ) արտադրանքի անվանումը, տեսակը,

գ) գտաքաշը,

դ) թողարկման թվականը (ամիսը, տարին),

ե) պահման պայմանները,

զ) օգտագործման վերաբերյալ ցուցումները, արտադրանքի հետ վարվելու

նախազգուշական միջոցները,

է) թունավորության եւ հրդեհավտանգության վերաբերյալ տվյալները:

11. Արգելակի հեղուկների յուրաքանչյուր սպառողական տարայի վրա լրացուցիչ կարող են նշվել սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում նախատեսված նավթի հիմքով եւ ոչ նավթի հիմքով արգելակի հեղուկների տարաների մականշման ստանդարտով սահմանված այլ տվյալներ:

12. Հակասառիչների եւ արգելակի հեղուկների փոխադրական տարաների վրա պետք է լինի հետևյալ բովանդակության մականշվածք՝

ա) արտադրող, մատակարարող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը եւ (կամ) ապրանքային նշանը (առկայության դեպքում),

բ) արտադրանքի անվանումը, տեսակը,

գ) գտաքաշը եւ համաքաշը,

դ) թողարկման թվականը (ամիսը, տարին),

ե) պահման պայմանները:

Փոխադրական տարիների վրա, սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում

նախատեսված ստանդարտների պահանջներին համապատասխան, պետք է լրացուցիչ լինեն

"Վերել", "Փխրուն է: Ջգույշ" (ապակյա սպառողական տարայով արտադրանքի համար), "Պահպանել տաքացումից" վարվելակարգային նշանները եւ բեռների փոխադրման վտանգավորությունը բնութագրող վտանգավորության նշանը՝ OOH սերիական համարը, վտանգավոր նյութի դասերը, դասակարգման ծածկագիրը՝

հակասառիչների դասը՝ 6, ենթադասը՝ 6.1, դասակարգման ծածկագիրը՝ 6161, արգելակի հեղուկների դասը՝ 3, ենթադասը՝ 3.3, դասակարգման ծածկագիրը՝ 3313:

13. Արգելակի հեղուկներով սպառողական եւ փոխադրական տարաների վրա լրացուցիչ պետք է նշվի արգելակի հեղուկի տիպը (նավթի հիմքով կամ ոչ նավթի հիմքով) բնութագրող գրաֆիկական սիմվոլի մականշվածքը՝ ըստ սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում նախատեսված համապատասխան ստանդարտի պահանջների:

14. Մականշումը կատարվում է անմիջապես հակասառիչով, արգելակի հեղուկով սպառողական եւ փոխադրական տարաների կամ պիտակների վրա:

Մականշվածքը պետք է լինի հստակ եւ չկեղտոտված, ներկի գույնը պետք է լինի հակադրական տարայի եւ պիտակի գույնին, տեքստը պետք է լինի դյուրընթեռելի:

15. Փոխադրական տարայի վրայի մականշվածքը պետք է կայուն լինի ջրի եւ օրգանական լուծիչների նկատմամբ (օրգանական լուծիչ պարունակող արտադրանքի համար):

16. Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ապահովի Հայաստանի Հանրապետությունում իրացվող՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող եւ ներմուծվող հակասառիչների եւ արգելակի հեղուկների վերաբերյալ սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ ու 11-րդ կետերով սահմանված տեղեկատվության եւ դրանց բովանդակության տրամադրումը սպառողին՝ հայերենով:

Հակասառիչների եւ արգելակի հեղուկների փաթեթավորմանը, փոխադրմանն ու պահմանը ներկայացվող պահանջները

17. Հակասառիչների եւ արգելակի հեղուկների փաթեթավորմանը, փոխադրմանն ու պահմանը ներկայացվող պահանջները սահմանվում են սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում նախատեսված համապատասխան ստանդարտներով, ինչպես նաեւ կոնկրետ արտադրանքի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով:

18. Հակասառիչների փաթեթավորումը պետք է կատարվի չոր, մետաղյա հերմետիկ փակվող տակառներում:

Տակառներ լցվող հակասառիչ խտանյութի ջերմաստիճանը պետք է լինի մինուս 10 օC-ից մինչեւ պլուս 50 օC, բանող հակասառիչներինը՝ մինուս 50 օC-ից մինչեւ պլուս 50 օC:

Որպես հակասառիչների սպառողական տարա օգտագործում են նաեւ պոլիմերային տարաներ:

Սպառողական տարայում չափածրարված հակասառիչների գտաքաշի շեղումը տարայի վրա նշված անվանական զանգվածից չպետք է գերազանցի +/-2 տոկոսը:

19. Արգելակի հեղուկները փաթեթավորում են հերմետիկ փակվող ապակյա եւ պոլիէթիլենային բանկաներում եւ շշերում, պոլիէթիլենային կանխսորներում, մետաղական բիդոններում եւ սեւ թիթեղից բանկաներում:

Սպառողական տարայում չափածրարված արգելակի հեղուկների գտաքաշի շեղումը տարայի վրա նշված անվանական արժեքից չպետք է գերազանցի +/-5 տոկոսը:

20. Տարայի լցման մակարդակը պետք է հաշվարկվի՝ հաշվի առնելով տարայի տարողությունը, բեռնունակությունը եւ արտադրանքի ծավալային ընդարձակումը՝ կախված պահման եւ փոխադրման ժամանակ ջերմաստիճանի հնարավոր փոփոխությունից:

21. Փաթեթավորված հակասառիչները եւ արգելակի հեղուկները փոխադրվում են տրանսպորտի բոլոր տեսակներով՝ համաձայն տվյալ տեսակի տրանսպորտով բեռների փոխադրման կանոնների:

Հակասառիչները եւ արգելակի հեղուկները պետք է պահել փակ տարածքներում պաշտպանելով մթնոլորտային տեղումներից:

Հակասառիչների եւ արգելակի հեղուկների պահման երաշխիքային ժամկետը պետք է սահմանվի արտադրող կազմակերպության կողմից՝ կոնկրետ արտադրանքի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթով:

Հակասառիչների եւ արգելակի հեղուկների արտադրման եւ օգտագործման ժամանակ շրջակա միջավայրի պահպանության պահանջները

22. Հակասառիչների հիմնական բաղադրիչը էթիլենգլիկոլն է, որը թունավոր է, օժտված է մարդու օրգանիզմի վրա թմրեցուցիչ հատկությամբ: Այն կարող է ներթափանցել մաշկային ծածկույթի միջոցով, օժտված չէ կուտակային հատկությամբ: Հակասառիչների վտանգավոր ազդեցությունը մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա պետք է գնահատվի ըստ էթիլենգլիկոլի, որի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան աշխատանքային գոտու օդում չպետք է գերազանցի 5 մգ/մ³, իսկ էթիլենգլիկոլի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան մթնոլորտային օդում չպետք է գերազանցի 0,07 մգ/մ³-ը:

Համաձայն սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում նախատեսված համապատասխան ստանդարտի էթիլենգլիկոլը պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի վտանգավորության III դասին:

Հակասառիչ խտանյութը պատկանում է դյուրավառ նյութերի խմբին, որի գոլորշիների բռնկման ջերմաստիճանը՝ 120 օC է, ինքնաբոցավառման ջերմաստիճանը՝ 380 օC, օդում, հազեցած գոլորշիների բոցավառման սահմանային ջերմաստիճանները՝ ստորինը՝ 112 օC, վերինը՝ 124 օC:

Բանող հակասառիչները հրդեհապայթյունաանվտանգ են:

23. Արգելակի հեղուկների (գերչակի յուղի եւ բուտիլ սպիրտի խառնուրդների հիմքով) հիմնական բաղադրիչներից մեկը բուտիլ սպիրտն է, որը հրդեհավտանգ եւ թունավոր է, օժտված է մարդու օրգանիզմի վրա թմրեցուցիչ հատկությամբ: Այն կարող է ներթափանցել մաշկային ծածկույթի միջոցով՝ առաջացնելով չորություն, ճաքեր եւ գրգռվածություն: Դրա գոլորշիները գրգռում են աչքերը եւ վերին շնչառական ուղիների լորձաթաղանթը: Արգելակի հեղուկի վտանգավոր ազդեցությունը մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա պետք է գնահատվի ըստ բուտիլ սպիրտի, որի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան աշխատանքային գոտու օդում չպետք է գերազանցի 10 մգ/մ³, իսկ բուտիլ սպիրտի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան մթնոլորտային օդում չպետք է գերազանցի 0,1 մգ/մ³-ը:

Համաձայն սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում նախատեսված համապատասխան ստանդարտի բուտիլ սպիրտը պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի վտանգավորության III դասին:

Արգելակի հեղուկները պատկանում են դյուրավառ նյութերի խմբին, որոնց գոլորշիների բռնկման ջերմաստիճանը՝ 34 օC է, ինքնաբոցավառման ջերմաստիճանը՝ 345 օC, բոցի տարածման խտության սահմաններն ըստ ծավալի՝ 1,7-ից մինչեւ 12,0%:

24. Նավթային եւ այլ ոչ նավթային հիմքով արգելակի հեղուկների անվտանգության եւ շրջակա միջավայրի պահպանության պահանջները պետք է գնահատվեն

ըստ արգելակի հեղուկների հիմնական բաղադրիչների վտանգավորության դասի՝ սահմանված սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում նախատեսված վնասակար նյութերի դասակարգման եւ անվտանգության ընդհանուր պահանջների ստանդարտով:

25. Հակասառիչների եւ արգելակի հեղուկների ազդեցությունից շրջակա միջավայրի պահպանությունը պետք է ապահովվի տարաների եւ տեխնոլոգիական սարքավորանքի հերմետիկացմամբ:

V. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

26. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին հակասառիչների եւ արգելակի հեղուկների համապատասխանությունը հավաստելու համար արտադրողը, մատակարարը կամ

նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի "Արտադրանքի կամ ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները եւ դրանց

նույնականացման նշագրերը սահմանելու մասին" N 1170-Ն որոշմամբ սահմանված 2h, 3h կամ 4h հայտարարագրման սխեմաներից որեւէ մեկով հավաստված համապատասխանության հայտարարագրի կամ սերտիֆիկացման 2ս, 3ս, 4ս, 5ս կամ 6ս սխեմաներից որեւէ մեկով հավաստված համապատասխանության սերտիֆիկատ:

Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը հակասառիչների եւ արգելակի հեղուկների փոխադրական տարաների վրա եւ ապրանքաուղեկից փաստաթղթերում կարող է նշել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի "Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող

տեխնիկական պահանջները եւ կիրառման կարգը հաստատելու մասին" N 1281-Ն որոշմամբ սահմանված ձեւի համապատասխանության նշան:

27. Սերտիֆիկացման մարմինը փորձարկումներ կատարելու նպատակով հակասառիչների եւ արգելակի հեղուկների նմուշառումն իրականացնում է արտադրողի, մատակարարի կամ նրա լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ՝ տվյալ խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար քանակով, սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում նախատեսված նմուշառման ստանդարտով սահմանված պահանջներին համապատասխան:

28. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան փորձարկումները պետք է կատարի սույն տեխնիկական կանոնակարգի VIII բաժնում նախատեսված փորձարկման մեթոդների ստանդարտներին համապատասխան:

29. Հակասառիչների եւ արգելակի հեղուկների նույնականացման գործընթացում ստուգում են փաթեթավորման տարաների կամ դրանց փակցված պիտակների վրա կատարված

մականշվածքի համապատասխանությունն ապրանքաուղեկից փաստաթղթերում տրված տեղեկատվությանը:

30. Սերտիֆիկացման մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ հանձնելու ժամանակ նրա հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատի օգտագործման մասին պայմանագիր, եթե սերտիֆիկացման գործողություններն իրականացվել են 2ս, 3ս, 4ս կամ 5ս համապատասխանության հավաստման սխեմաներից որեւէ մեկով:

31. Սերտիֆիկացման մարմինը համապատասխանության հայտարարագրի եւ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարի ըստ համապատասխանության հավաստման իրականացված սխեմայի 2h, 4h, 2ս կամ

6ս, սխեմայի դեպքում՝ 12 ամիս, 3ս սխեմայի դեպքում՝ 24 ամիս, 3հ, 4ս կա 5ս սխեմայի դեպքում՝ 36 ամիս:

32. "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սերտիֆիկացված հակասառիչների եւ արգելակի հեղուկների համապատասխանության հսկողությունն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընթացքում, առնվազն տարեկան մեկ անգամ սույն տեխնիկական կանոնակարգի 30-րդ կետում նշված պայմանագրի հիման վրա:

33. Համապատասխանության հսկողության արդյունքների հիման վրա "Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սերտիֆիկացման մարմինն իրավունք ունի պահպանելու իր կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու: Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման եւ դադարեցման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 12-ի N 1170-Ն որոշմամբ:

Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացման մարմինն այդ մասին տեղեկացնում է համապատասխանության սերտիֆիկատը տնօրինողին եւ գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմնին:

VI. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

34. Հակասառիչների եւ արգելակի հեղուկների չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի "Չափումների միասնականության ապահովման մասին"

Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

35. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին հակասառիչների եւ արգելակի հեղուկների համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի

"Համապատասխանության գնահատման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

VIII. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ստանդարտի նշագիրը (բաժինը, կետը)	Պահանջներ եւ փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը
1	2
ԳՕՍՍ 9.030 1-ին բաժին	Քայքայումից (կոռոզիայից) եւ հնացումից պաշտպանության միասնական համակարգ. Ռետիններ. Հեղուկ ագրեսիվ միջավայրերի ազդեցության նկատմամբ ոչ լարված վիճակում կայունության որոշման մեթոդներ
ԳՕՍՍ 12.1.005	Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ.

	Ընդհանուր սանիտարահիգիենիկ պահանջներ աշխատանքային զոտու օդի նկատմամբ
ԳՕՍՍ 12.1.007	Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Վնասակար նյութեր. Դասակարգում եւ անվտանգության ընդհանուր պահանջներ
ԳՕՍՍ 12.1.044	Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Նյութերի հրդեհապայթյունանվտանգություն. Ցուցանիշների անվանացանկը եւ դրանց որոշումը
ԳՕՍՍ 33 (ԻՍՕ 3104)	Նավթամթերք. Թափանցիկ եւ ոչ թափանցիկ հեղուկներ. Կինեմատիկական մածուցիկության որոշում եւ դինամիկական մածուցիկության հաշվարկ
ԳՕՍՍ 2917	Յուղեր եւ հավելանյութեր. Մետաղների վրա քայքայիչ (կոռոզիական) ազդեցության որոշման մեթոդ
ԳՕՍՍ 11362	Նավթամթերք եւ քսանյութ. Չեզոքացման թիվ. Պոտենցաչափական տիտրման մեթոդ
ԳՕՍՍ 14192	Մակնշում բեռների
ԳՕՍՍ 18955.6	Արտադրանք քիմիական օրգանական. Եռման ջերմաստիճանի որոշման մեթոդներ
ԳՕՍՍ 19433	Բեռներ՝ վտանգավոր, Դասակարգում եւ մակնշում
ԳՕՍՍ 28084	Հեղուկներ սառեցնող ցածրասառ. Ընդհանուր տեխնիկական (կետեր 3.6, 3.7, 4.3, պայմաններ 4.4, 4.5, 4.7, 4.8)
ԳՕՍՍ 29200 (ԻՍՕ 9128)	Ճանապարհային տրանսպորտ. Արգելակի հեղուկների տիպերը նշող գրաֆիկական սիմվոլներ
ՀՍՍ ԻՍՕ 3871	Ճանապարհային տրանսպորտ. Նավթի հիմքով կամ ոչ նավթի հիմքով արգելակի հեղուկի տարայի մակնշում
ՀՍՍ ԻՍՕ 4925	Ճանապարհային տրանսպորտ. Արգելակի հեղուկ ոչ նավթի (բաժին 5, հավելվածներ հիմքով Ա, Բ, Գ, Դ, Ե)
ՀՍՍ ԻՍՕ 7308	Ճանապարհային տրանսպորտ. Արգելակի հեղուկ նավթի (բաժին 7, հավելվածներ հիմքով էներգիայի կուտակմամբ հիդրավլիկ արգելակների Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ) համար

(VIII բաժինը փոփ. 25.01.07 թիվ 83-Ն որոշում)

